Մամլո հաղորդագրություն
ԱՄՀ-ի աշխատակազմի այցելությունը Հայաստան

2 հուլիս, 2007 թ.

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) առաքելությունը, տիկին Մարտա Կաստելո-Բրանկոյի գլխավորությամբ, այցելեց Երևան 2007 թ. հունիսի 26-ից մինչև հուլիսի 2-ը, որպեսզի նոր Կառավարության, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ), գործարար ոլորտի ներկայացուցիչների և միջազգային դոնորների հանրության հետ քննարկի Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշները և հեռանկարները: Առաքելությունն արգասաբեր քննարկումներ ունեցավ իշխանությունների հետ տարբեր թեմաներով, ներառյալ կենսաթոշակային բարեփոխումները, գազի սուբսիդիան և այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են իրական արժևորման ճնշումների շարունակման պայմաններում արտաքին մրցունակությունը պահպանելու համար:

I. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանի տնտեսության ցուցանիշներն այս տարի դեռ շարունակում են տպավորիչ մնալ. ՀՆԱ-ի աճը գերազանցել է ակնկալիքները, գնաճը համահունչ է ՀՀ ԿԲ-ի նպատակային ցուցանիշին, իսկ հարկային եկամուտների հավաքագրումը գերազանցել է պլանային ցուցանիշը: Բացասական կողմերից հարկ է նշել, որ գնաճային ճնշումներն ավելանում են՝ պայմանավորված ներմուծվող ցորենի գնի կտրուկ բարձրացմամբ, տարվա երկրորդ կեսի ընթացքում նախատեսվող պետական ծախսումների ավելի բարձր մակարդակով և այն ակնկալիքով, որ ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի առքը կշարունակվի:

Չնայած աճի բարձր ցուցանիշներին, դեռ առկա են մի քանի մարտահրավերներ: Նախ, որ ամենակարևորն է, անհրաժեշտ է պահպանել տնտեսական աճի բարձր տեմպերը և էլ ավելի կրճատել աղքատությունը: Մեկ այլ կարևոր մարտահրավեր է գնաճի ցածր մակարդակի պահպանումը՝ խնդիր, որը դյուրին չէ, եթե հաշվի առնենք արտաքին ցնցումները (օրինակ՝ ցորենի գնի կտրուկ բարձրացումը), հարկաբյուջետային ճնշումները և արտարժութային մեծածավալ ներհոսքի պահպանումը:

Կառավարության 2007-2012 ծրագիրն իրավացիորեն անդրադառնում է այս հիմնախնդիրներից շատերին: Ողջունում ենք այն հանգամանքը, որ Ծրագրում ուշադրություն է դարձվում տնտեսական բարձր աճի ապահովմանը, աղքատության կրճատմանը և կոռուպցիայի դեմ պայքարին՝ միաժամանակ շարունակելով հիմնավորված մակրոտնտեսական քաղաքականության իրագործումը: Մասնավորապես, քաջալերող է այն հանգամանքը, որ Ծրագրում շեշտադրվում է հարկային վարչարարության կատարելագործումը, հարկային նոր արտոնությունների բացառումը, ֆինանսական միջնորդության որակի և խորության բարելավումը և, առավել ընդհանուր գծերով, ստվերային տնտեսության ծավալների փոքրացման նպատակով, արտադրողականության բարձրացման և մրցունակության պահպանման նպատակով գործարարության միջավայրի կատարելագործումը:

Կենսաթոշակային բարեփոխումները

Ողջունում ենք Հայաստանի կենսաթոշակային համակարգը բարեփոխելու՝ իշխանությունների ծրագրերը: Այնուհանդերձ, որպեսզի բարեհաջող կերպով իրականացվեն կենսաթոշակային բարեփոխումներ, որոնց արդյունքում կբարձրանա կենսամակարդակը և կսերտանա կապը մասհանումների և կենսաթոշակների միջև, անհրաժեշտաբար կառաջանան ֆիսկալ ծախքեր, որոնք պետք է իրատեսորեն գնահատել և դիտարկել կառավարության այլ գերակայությունների համադրությամբ: Ուստի, խորհուրդ ենք տալիս համապարփակորեն գնահատել բոլոր հնարավոր ծախքերը և դրանց ազդեցությունը գնաճի վրա:

Գազի սուբսիդիան

Կառավարությունը մտադիր է թույլ տալ, որպեսզի 2008 թ. տարեվերջին լրանա գազի ընթացիկ սուբսիդիայի գործողության ժամկետը: Այնուհանդերձ, սուբսիդիայի սպառումը, 2009 թ. գործող պայմանագրի ժամկետը լրանալուց հետո հավանական՝ ներմուծման գների բարձրացման հետ մեկտեղ, ստեղծում է սպառողական սակագների մինչև 200 տոկոսով ավելացման հնարավորություն: Այս կտրուկ ավելացումից խուսափելու տարբերակներից մեկն է սուբսիդիան աստիճանաբար կրճատելը՝ սկսելով հնարավորին չափ շուտ: Դրամի կայուն տեմպերով արժևորումը պետք է որ հեշտացնի այս գործընթացը՝ գազի ներմուծումը դրամային արտահայտությամբ դարձնելով ավելի էժան: Սուբսիդիան աստիճանաբար կրճատելու պարագայում առաջացող բյուջետային խնայողությունները կարող են օգտագործվել սոցիալապես խոցելի տնային

տնտեսություններին պաշտպանելու համար, որի լավագույն միջոցը կլինի աղքատների համար սոցիալական ապահովության համապատասխան ցանցի նախագծումը:

Արտաքին մրցունակության պահպանում

Արտարժույթի ներհոսքը, որը հիմնականում կապված է փոխանցումների և անշարժ գույքի մեջ ներդրումների հետ, արդեն հանգեցրել է դրամի զգալի արժևորման, որը դժվարացնում է դրամավարկային քաղաքականության իրագործումը: Հաշվի առնելով, որ նշված ներհոսքը հավանաբար կշարունակվի տեսանելի ապագայում, հետագա իրական արժևորումն անխուսափելի է: Դա կդրսևորվի կամ անվանական արժևորման, կամ գնաճի տեսքով:

Չնայած որ արժևորումից տուժել են արտահանող որոշ ոլորտներ և փոխանցումներից կախված տնային տնտեսություններ, առկա փաստացի տվյալները վկայում են, որ Հայաստանի տնտեսությունն ամբողջությամբ վերցված մնում է ընդհանուր առմամբ մրցունակ: Օրինակ, 2007 թ. առաջին եռամսյակի ընթացքում ընդհանուր արտահանումը 2006 թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 25 տոկոսով: Մրցունակությունը պահպանելու համար, սակայն, կառավարությունից լրացուցիչ ջանքեր կպահանջվեն գործարարության միջավայրը բարելավելու և արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ:

Արտարժույթի մեծածավալ ներհոսքի պահպանման պայմաններում դրամավարկային քաղաքականությունը, բացառությամբ կարճաժամկետ հատվածի, չի կարող կանխել իրական արժևորումը: Չնայած որ ՀՀ ԿԲ-ն կարող է սահմանափակել անվանական արժևորումը՝ գնելով արտարժույթ և վաճառելով դրամ, դա ի վերջո կհանգեցնի ավելի բարձր գնաճի, որը հավասարապես ծանր կանդրադառնա և ձեռնարկությունների, և տնային տնտեսությունների, սակայն՝ հատկապես աղքատների վրա: Ուստի, շարունակում է արդարացված մնալ գների կայունությունն ապահովելու և ընդհանուր առմամբ ճկուն փոխարժեք պահպանելու՝ ՀՀ ԿԲ-ի նպատակը: Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականությունը և կառուցվածքային բարեփոխումները պետք է կարևոր դեր կատարեն՝ իրական արժևորման ճնշումները սահմանափակելու և այդ արժևորմանն ավելի հեշտորեն հարմարվելու գործում ձեռնարկություններին օգնելու առումներով: Դրա համար անհրաժեշտ կլինի լուրջ ջանքեր գործադրել՝ իրականացնելու “երկրորդ սերնդի” բարեփոխումներ, ինչպես նախատեսված է Կառավարության ծրագրով: